



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՐՈՎՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մամլո հաղորդագրություն

Հասցե՝ ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
Էլ փոստ՝ info@sif.am
Հեռ.՝ (060) 654 013, (010) 52 15 94
Մամլո քարտուղար՝ Արամայիս Շահբեկյան
Հեռ.՝ (060) 654 011, (041) 51 14 11
Հասարակայնության հետ
կապերի բաժնի պետ՝ Նոնա Սարգսյան
Հեռ.՝ (060) 654 020, (095) 51 14 17

Նշանակվել է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության նոր պետ

Երևան, 2017թ. Օգոստոսի 11: ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի 2017 թ. օգոստոսի 9-ի N 900-Ա որոշմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ է նշանակվել Հովհաննես Միշայի Սահակյանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը օգոստոսի 10-ին Ծառայության աշխատակազմին ներկայացրեց Ծառայության նորանշանակ պետ Հովհաննես Սահակյանին՝ շնորհավորելով նոր նշանակման կապակցությամբ: Նախարարը շեշտեց, որ համակարգն իր խնդիրներով և անելիքներով արդեն քաջաձանոթ է պրն Սահակյանին և համոզմունք հայտնեց, որ նրա գիտելիքն ու փորձը կնպաստեն շարունակելու Ծառայության գործունեության շրջանակներում ընթացող բարեփոխումները:

Ծառայության պետ Հովհաննես Սահակյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ Նախագահին՝ բարձր վստահության համար, վարչապետին և նախարարին՝ այս պատասխանատու պաշտոնում իրեն նշանակելու համար: Սահակյանն ընդգծեց, որ թիմային նվիրված աշխատանքի շնորհիվ կլուծեն իրենց առջև դրված խնդիրները:

###